


# Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртытион» (образование) еженедельник 09.08.2023թ. չորեքշաբթի թիվ 32-33 (1109-1110)

## Սեւանա լիճ

«Ամառվա օրը ծնունդ ամիս է կերակրում», - ասում է ժողովուրդը: Գյուղական վայրերում հողագործը այգաբացից մինչև մայրամուտ բանում է իր արտ ու դաշտում... Տա՛ Աստված, բերքը անվճառ հավաքի... Քաղաքացիները, տապից ընդարմացած, զովություն են փնտրում ըստ կարեցածի...



Ուսուցիչները նախապատրաստվում են նոր ուսումնական տարվան: Բուհերում ավարտվել են ընդունելության քննությունները. հաջողակները տոնում են առաջին ապագայամետ հաղթանակները... Դպրոցականները սիրահարվել են ջրավազաններին եւ կամ իրենց հանգիստն անցկացնում են ճամբարներում՝ Ծաղկածորում, Հանքավանում, Դիլիջանում, Սեւանում... Երեւանի բակերում: Սեւանում... Այս օրերին բոլորս ենք ձգտում դեպի Սեւան:

Դժվար է ճշգրիտ բնութագրել, թե ինչ է մեզ համար Սեւանա լիճը. ջր՝ րը մեր հանապազօրյա, բնապահպան խարի՛սխը մեր գոյության, կենսապահովման առա՛նցքը մեր Արեւելյան հատվածի... Երկար կարելի է շարունակել ու չսպառել նշանակությունը բնության այդ հրաշքի:

Ամառ է: Բոլորս ենք ձգտում դեպի Սեւան: Շատերս ենք ըմբռնվում նրա պարզեցողությամբ: Բայց պիտի հասկանանք նաեւ, որ Աստվածային մեր ամենաթանկ այդ պարզեցումը ինքը ունի մեր ուշադրության ու խնամքի կարիքը...

Գուրգուրենք, պահենք մեր Սեւանը, պետությամբ ու ժողովրդով, յուրաքանչյուրիս տարրական մարդկային վերաբերմունքով ու ջերմությամբ: Հիշենք, որ Սեւանը մեզ սնուցելու է դեռ դարեր:

## Համահայկական

### Մեկարկեց մարզական ավանդական 8-րդ ստուգատեսը



Գյումրու քաղաքային մարզադաշտում տեղի է ունեցել Համահայկական ամառային 8-րդ խաղերի բացման հանդիսավոր արարողությունը: Միջոցառմանը ներկա են եղել ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանը**՝ տիկնոջ՝ **Աննա Հակոբյանի** հետ, ՀՀ նախագահ **Վահագն Խաչատուրյանը**, ԱԺ նախագահ **Ալեն Սիմոնյանը**, ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար, Համահայկական ամառային 8-րդ խաղերի կազմակերպման եւ անցկացման կազմկոմիտեի նախագահ **Արայիկ Հարությունյանը**, օրենսդիր եւ գործադիր մարմինների անդամներ, պաշտոնատար այլ անձինք:

Համահայկական ամառային 8-րդ խաղերի բացման մարզական շքերթը դիտելուց հետո Նիկոլ Փաշինյանը հանդես է եկել ելույթով (**տե՛ս էջ 2**):

Համահայկական ամառային ութերորդ խաղերի ծրագրում ընդգրկված 17 մարզածեերի համար խաղարկվելու է 107 հավաքածու մեդալ: Խաղերին մասնակցում է 41 պետությունների, 181 քաղաքների 7000-ից ավելի մարզիկ:

#### Այս համարում

- Հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2023-2024 ուսումնական տարվա 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ եւ 12-րդ դասարանների օրինակելի ուսումնական պլանները

տե՛ս էջ 7-19

#### Հաջորդ համարում

- Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում 2023-2024 ուսումնական տարում ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույցը:

#### Հաջորդ համարում

- Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների առարկայական չափորոշիչներ եւ ծրագրեր փորձարկող 1-12-րդ դասարաններում 2023-2024 ուսումնական տարում ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույցը:



# Հայաստանի Հանրապետության կամքը՝ զարգանալու եւ առաջ ընթանալու...

## ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը Համահայկական ամառային 8-րդ խաղերի բացման հանդիսավոր արարողության ժամանակ

սկիզբը՝ էջ 1

«Հայաստանի Հանրապետության մեծարգո՝ նախագահ, Ազգային ժողովի մեծարգո՝ նախագահ,

Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի հարգելի՛ անդամներ,

Համահայկական խաղերի սիրելի՛ մասնակիցներ,

Ողջունում եմ Համահայկական 8-րդ խաղերը հանդիսանում, Հայաստանի Հանրապետությունում:

Եվ ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլոր մասնակիցներին՝ այսօրվա, այս երեկոյի հրաշալի էներգետիկ և ապահովելու համար, հրաշալի մթնոլորտն ապահովելու համար: Ուզում եմ ընդգծել, որ այսօրվա այս տոնն առաջին հերթին ոգեկոչումն է մեր բոլոր նահատակների, որովհետև ի ցույց է դնում մեր կամքը, հայ ժողովրդի կամքը, Հայաստանի Հանրապետության կամքը հաղթահարելու եւ ապրելու, զարգանալու եւ առաջ ընթանալու՝ ի հեծուկս բոլոր բարոյությունների, բոլոր դժվարությունների: Եվ այս օրը մի նոր խորհրդանիշ է մեր հետագայի համար, մեր ապագայի համար, որովհետև մենք մտնում ենք պատմական մի շրջափուլ, որտեղ պետություն ունենալու մեր կամքը պիտի մնա անսասան, հայրենիքը պետու-

թյուն դարձնելու եւ պետությունը հայրենիք ընկալելու մեր մտածելակերպը պիտի վերահաստատվի:

Ուզում եմ ողջունել աշխարհի տասնյակ երկրներից այսօր Հայաստան ժամանած մեր հայրենակիցներին՝ հատկապես նրանց, ովքեր առաջին անգամ են Հայաստանում, ովքեր առաջին անգամ են հյուսիսում: Եվ հույս ունեմ նրանք տեսնում են հյուսիսի նոր վերածնունդը, հյուսիսի՝ Հայաստանի երկրորդ քաղաքը, վերածնվում է եւ վերափոխվում է ամեն օր, եւ Հայաստանի Հանրապետությունը վերափոխվում է ամեն օր: Ուզում եմ ընդգծել նաեւ, որ Հայաստանում նոր զարգացում է ապրում նաեւ սպորտը: Պիտի արձանագրենք, որ 2022 թվականին Հայաստանի մարզիկները գրանցել են պատմական աննախադեպ նվաճումներ աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններում, միջազգային մրցաշարերում նվաճած ոսկե, արծաթե, բրոնզե մեդալներով: Բայց պիտի ուրախությամբ արձանագրենք, որ այսօրվա դրությամբ արդեն Հայաստանի մարզիկները Աշխարհի, Եվրոպայի առաջնություններում, միջազգային մրցաշարերում իրենց նվաճած մեդալներով արդեն իսկ հաղթահարել են նախորդ տարվա բացարձակ ռեկորդը, եւ սա Համահայկական խաղերի կարևորագույն նվերն է հայաստանցի մարզիկների կողմից:

Այսօր նաեւ պիտի արձանագրենք, որ Հայաստանի Հանրապետությունում մեծ թափով զարգանում են մարզական ենթակառուցվածքները: Գյումրիում կառուցվում է Արթուր Ալեքսանյանի անվան մարզադպրոցը, բոլորովին վերջերս բացվեց Խորեն Յովհաննիսյանի անվան ֆուտբոլի մարզադպրոցը: Կառուցվում է Սիմոն Մարտիրոսյանի անվան ծանրամարտի մարզադպրոցը: Առաջիկայում կկառուցվեն Ռոման եւ Սալխաս Անոյանների անվան մարզադպրոցը Հայաստանի ամենամեծ եզդիաբնակ համայնքում Ալազաղում, կկառուցվի Արթուր Աբրահամի անվան մարզադպրոցը եւ, ընդհանրապես, նորանոր մարզական ենթակառուցվածքներ, որովհետև սպորտը մեզ համար կարևորագույն նշանակություն ունի, սպորտն է, որ աշխարհի մարզական բարձունքներում ի ցույց է դնում, բարձրացնում է Հայաստանի Հանրապետության պետական դիրքը, հնչեցնում է Հայաստանի Հանրապետության օրհներգը:

Հայաստանի Հանրապետության մեծարգո՝ նախագահ,

Հարգելի՛ ներկայից, Համահայկական 8-րդ խաղերը, այսպիսով, հայտարարում եմ բացված:

Փառք նահատակներին, եվ կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը»:



## «Միասնություն՝ սպորտով»

Համահայկական ամառային 8-րդ խաղերի բացման հանդիսավոր արարողությանը լուսաձայնային գեղեցիկ շուրջ ծրագրով նախ ներկայացվել է 1999 թվականից անցկացվող Համահայկական խաղերի պատմությունը, անդրադարձ է կատարվել Հայաստանի մշակութային ու պատմական ժառանգությանը, ինչպես նաեւ չեմպիոնների դարբնոց հյուսիսում ու գյումրեցի անվանի մարզիկներին:


Այնուհետև տեղի է ունեցել խաղերի բացման մարզական շքերթը՝ մասնակից 41 երկրների 181 քաղաքների պատվիրակների մասնակցությամբ: Հատկանշական է, որ Համահայկական ամառային 8-րդ խաղերն առաջին անգամ հյուրընկալել են նաեւ Չիլիի, Շվեդիայի, Սաուդյան Արաբիայի, Ղազախստանի, Հնդկաստանի, Հորդանանի եւ Եստոնիայի մեր հայրենակիցներին:

Համահայկական ամառային 8-րդ խաղերի գլխավոր ջանք վառել է Եվրոպայի վեցակի, աշխարհի քառակի չեմպիոն, օլիմպիական խաղերի ոսկե մեդալակիր, ըմբիշ Արթուր Ալեքսանյանը: Մինչ այդ էլ Համահայկական խաղերի դրոշմ մարզադաշտ են բերել օլիմպիական չեմպիոններ Իսրայել Միլիտոսյանը, կրկնակի օլիմպիական չեմ-

պիոն Արմեն Նազարյանը, Տոկիոյի Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր, աշխարհի ու Եվրոպայի չեմպիոն Արթուր Դավթյանը, Տոկիոյի Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր Հովհաննես Բաչկովը, աշխարհի ու Եվրոպայի չեմպիոն Նազիկ Ավդալյանը եւ աշխարհի, Եվրոպայի կրկնակի չեմպիոն Մալխաս Անոյանը:

Վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը նշել է, որ խաղերի կառավարական կազմակերպումն որեւէ ջանք չի խնայել, որպեսզի Համահայկական խաղերը լինեն լավագույնը պատմության ընթացքում. «Կարծում եմ առաջին իսկ օրվանից մեր կողմից դրված բարձր նշանոցը կարողացել ենք պահել, պահելու ենք եւ օգոստոսի 19-ին ազդարարելու ենք, որ մեր հայրենակիցները հաճույք ստացան Համահայկական խաղերից, սիրեցին Հայաստանը եւ հանձն առան վերադառնալ հայրենիք»:

Ի դեպ, Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի գործադիր մարմնի որոշմամբ՝ խաղերը լավագույնս կազմակերպելու, համակարգելու եւ օժանդակելու համար ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար, խաղերի կազմակերպիչ



նախագահ Արայիկ Հարությունյանը պարգևատրվել է Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի բարձրագույն՝ Պատվոց նշան շքանշանով:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը եւս շնորհավորել է մարզական խաղերի մեկնարկի առթիվ. «Համահայկական մարզական խաղերի մեկնարկը կայացած է, այն հիանալի է, իսկ մասնակիցների թիվն էլ հետզհետե ավելանում է: Շնորհա-

վորում եմ բոլորիս՝ համայն հայության այս գեղեցիկ տոնի կապակցությամբ: Սա, հիշարժի, հրաշալի մարզական տոն է»:

«Համահայկական խաղերն այս 25 տարիների ընթացքում դարձել են միասնության, եղբայրության, սիրո ու համերաշխության իսկական պատգամ այսօրվա եւ գալիք սերունդներին», - նշել է Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Չաքարյանը:





«Դպրոցական սնունդ եւ երեխաների բարեկեցություն»

Ներկայացվել են դեկավար հիմնարկի հաշվետվությունները

«Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոնում» (ԿԶՆԱԿ) տեղի է ունեցել «Դպրոցական սնունդ եւ երեխաների բարեկեցություն» («ԴՍԵԲ») հիմնարկի դեկավար հանձնաժողովի հերթական նիստը:

Այն վարել է ԳՅ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաշյանը՝ որպես դեկավար հանձնաժողովի նախագահ: Նիստին ներկա էր ԿԶՆԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արտաշես Թորոսյանը, որպես հատուկ հյուր՝ հրավիրված էր ՄԱԿ ԴԳԾ հայաստանյան գրասենյակի դեկավար Նաննա Սկաուն:

Հանդիպմանը «ԴՍԵԲ» հիմնարկի տնօրեն Սաթենիկ Մկրտչյանը ներկայացրել է «ԴՍԵԲ» հիմնարկի գործունեության 2023 թ. 2-րդ եռամսյակի հաշվետվությունները, ինչպես նաև «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակի «Սնուցում եւ ֆիզիկական ակտիվություն» բաղադրիչի 6-րդ եւ 8-րդ դասարաններում փորձարկման մոնիտորինգի արդյունքները: Քննարկվել են դպրոցամերձ ջերմատների եւ ինտենսիվ այգիների հետ կապված աշխատանքները, այդ թվում՝ գյուղատնտեսների ներգրավման եւ խմբակների գործարկման համատեքստում:

Հաշվետվության ընթացքում նշվել է, որ մարզպետարանների հետ համագործակցությամբ թարմացվել է դպրոցական ճաշացանկը, եւ մշակվել են մեթոդական ուղե-



ցույցներ: Նախատեսվում է պիլոտային ծրագիր՝ մի քանի դպրոցներում 5-րդ դասարանից բարձր աշակերտների համար վճարովի ճաշարաններ ունենալու եւ դրանք համապատասխան ուղեցույցներով աշխատացնելու հնարավորությունները:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաշյանը ընդգծել է բոլոր դպրոցների չոր սննդից տաք սննդի անցման անհրաժեշտությունը: Այս ուղղությամբ նա առաջարկել է կատարել վերլուծություն եւ ներկայացնել, թե քանի դպրոցում ներդրված չէ տաք սննդի համակարգը: Ըստ նրա՝ կարիքի գնահատումից հետո կքննարկվեն հա-

մապատասխան պայմաններ եւ տեխնիկա ձեռք բերելու հնարավորությունները՝ տվյալ դպրոցներում եւս ապահովելու տաք սնունդ: Արաքսիա Սվաշյանը նշել է երեւանում եւս «Դպրոցական սնունդ» ծրագրի ներդրման ու հետագա քայլերի պլանավորման անհրաժեշտությունը:

Նիստի ընթացքում, որպես հաշվետվություն, ներկայացվել են Տավուշում կատարված մշտադիտարկման արդյունքները, այդ նպատակով այցելություններ են եղել շուրջ 500 դպրոց: Սեպտեմբերին գործընթացը կշարունակվի: Առաջարկվել է կատարել մշտադիտարկման համակարգի փոփոխու-

թյուն: Արդեն իսկ հաստատվել է մշտադիտարկման ուղեցույցը, որը, ըստ առաջարկի, պետք է դառնա էլեկտրոնային կառավարման մաս: Մշակվել են նաև ձեռնարկներ՝ դպրոցական այգեպանների համար: Նախատեսվում են վերապատրաստումներ տարբեր ուղղություններով՝ թե՛ խոհարարների, թե՛ տնօրենների համար, ինչպես նաև աշխատանքներ են տարվելու դասղեկների հետ:

Դպրոցներում նաև կազմակերպվում են ինտերակտիվ ներկայացումներ՝ առողջ սննդի մասին: Առաջին ներկայացումը տեղի է ունեցել Աշտարակի թիվ 4 դպրոցում:

Նշվել է, որ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակի «Սնուցում եւ ֆիզիկական ակտիվություն» բաղադրիչի՝ 6-րդ եւ 8-րդ դասարաններում փորձարկումը դրական է ընդունվել դպրոցներում, ինչի արդյունքում տարեցտարի ծրագիրը կկատարելագործվի:

Դպրոցամերձ ջերմատների եւ ինտենսիվ այգիների վերաբերյալ կարելուվել է ոլորտում օրենսդրական կարգավորում ունենալու անհրաժեշտությունը, ինչը զգալիորեն կհեշտացնի գործընթացը:

Նիստի ավարտին որոշվել է առաջարկները քննարկել աշխատանքային կարգով եւ ընթացք տալ՝ ըստ անհրաժեշտության:

Նիստի մասնակիցներն արված աշխատանքների հաշվետվությունները գնահատել են գոհացուցիչ եւ հաստատել դրանք:

Մայր Աթոռ

Կոստանդնուպոլսի հայկական «Մարալ» երգի-պարի անսամբլի անդամները Վեհարանում

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց ուխտավորաբար Հայաստան ժամանած Կոստանդնուպոլսի հայկական «Մարալ» երգի-պարի անսամբլի անդամներին:

Հայրապետական իր օրհնությունը բերելով ուխտավորներին՝ Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց պուսահայերի՝ Մայր Աթոռ այցի առիթով:

Հայոց Հայրապետը հաս-

տատեց, որ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքությունը մեծ դերակատարություն է ունեցել ազգային, մշակութային, հոգեւոր եւ բարոյական արժեքների պահպանման գործում:

Իր խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց նաև, որ մշտապես տեսել է պոլսահայ համայնքի զորավոր հավատքը եւ անվերապահ սերը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նկատմամբ:

Այս առնչությամբ, Նորին Սրբությունը, վերհիշելով իր հովվապետական այցը Կոս-

տանդնուպոլիս ուրախությամբ արձանագրեց, որ հակառակ բոլոր տեսակի դժվարությունների եւ փորձությունների, պոլսահայերը ամուր են պահել իրենց հավատքը, սրբություններն ու ազգային ինքնության գիտակցությունը:


Վերջում Ամենայն Հայոց Հայրապետը բարենաղթեց պոլսահայ ուխտավորներին, որ Աստուծո օրհնության ներքո ապրեն խաղաղ եւ ապահով, պահպանեն հայրենի ժառանգությունը եւ ավելի շենացնեն պոլսահայ կյանքը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Արգենտինայի հայոց թեմի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» եւ «Դերձակյան» դպրոցների ավարտական դասարանների աշակերտներին:

Նորին Սրբությունը, իր հայրական օրհնությունն ու սերը փոխանցելով Արգենտինայից ժամանած հայորդիներին, գուհամակությամբ արձանագրեց, որ արգենտինահայ գաղութն այժի է ընկնում առանձնահատուկ կազմակերպվածությամբ, հայ կյանքի եւ ազգային արժեքների նախանձախնդիր պահպանմամբ:

Հանդիպմանը Հայոց Հայրապետը նաև իր գնահատանքը հայտնեց դպրոցների հոգաբարձուներին, տնօրենությանը եւ մանկավարժներին աշակերտներին հայեցի կրթելու ու դաստիարակելու գործում ներդրած ջանքերի համար:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց ավարտական դասարանների սաներին հայրենիքով խանդավառված ու ոգետրված լծվել արգենտինահայ համայնքի առավել զորացման գործին, իրենց զորավոր հավատքով հաղթահարել ժամանակակից մարտահրավերները եւ պահպանել ազգային գիտակցությունն ու ոգին:



Բարի լուր

Նախագիծ

Հերթական հաջողությունները

Հայաստանի մասնակիցները 1 ոսկե եւ 4 արծաթե մեդալ եւն նվաճել Բուլղարիայի Բլագոեգրադ քաղաքում հուլիսի 31-ից օգոստոսի 6-ը կայացած 30-րդ Մաթեմատիկական միջազգային ուսանողական օլիմպիադայում (International Mathematics Competition):



Ոսկե մեդալի արժանացել է Ռուբեն Համբարձումյանը, արծաթե մեդալների՝ Գագիկ Մելքունյանը, Վահագն Հովհաննիսյանը, Վահրամ Ասատրյանը (Երեւանի պետական համալսարան) եւ Արման Ֆահրադյանը (Հայ-ռուսական համալսարան): Ուսանողական միջազգային օլիմպիադայի հայաստանյան թիմը ղեկավարել է Կարեն Քեռյանը: Օլիմպիական թիմը մարզել են Կարեն Քեռյանը, Վազգեն Միքայելյանը, Ալբերտ Գեորգյանը, Արման Բայրամյանը եւ Տիգրան Հակոբյանը: Օլիմպիադային մասնակցել են աշխարհի 70 համալսարանների թիմերի շուրջ 393 ուսանողներ:

Մշակույթ

Կիսանդրին կվերականգնվի

2023 թ. նշվելու է քանդակագործ Սարգիս Բաղդասարյանի ծննդյան 100-ամյակը: ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը ֆինանսական միջոցներ է նախատեսել պատմության եւ մշակույթի անշարժ հուշարժան համալսարանի շուրջը Կուրդիմյանի գոյացված կիսանդրու պատրաստման եւ տեղադրման աշխատանքների համար:



Աշխատանքների իրականացման համար սահմանված կարգով հայտարարվել է մրցույթ, որի արդյունքում կնքվել է պայմանագիր: Այսպիսով՝ բանաստեղծ Շուշանիկ Կուրդիմյանի կիսանդրին շուրջը կվերականգնվի եւ կտեղադրվի Կոմիտասի անվան պանթեոնում: Հիշեցնենք, որ 2021 թվականին Կոմիտասի անվան պանթեոնի տարածքից գողացվել է անվանի քանդակագործ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Սարգիս Բաղդասարյանի քանդակած Շուշանիկ Կուրդիմյանի կիսանդրին: Դեպքի առթիվ ԿԳՄՍ նախարարությունը դիմել է ոստիկանություն, սակայն, ցավոք, այն չի բացահայտվել: Նշենք, որ անվանի քանդակագործ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Սարգիս Բաղդասարյանը (1923-2001 թթ.) բազմաթիվ հայտնի քանդակների հեղինակ է: Նրա կերտած հուշարժանների թվին են պատկանում Հունան Ավետիսյանի, Ավետիք Իսահակյանի, Հակոբ Պարոնյանի, «Մենք ենք մեր սարերը», «Ղարաբաղցիները», «Մեղեդի», «Հավերժ բարեկամություն», Դավիթ Բեկի, Լոռեցի Սաքոյի հուշարժանները:


Նոր կարգավորումներ՝ ուսուցիչների եւ արտադպրոցական հաստատությունների մանկավարժների դրույքաչափերի վերաբերյալ

Հանրային քննարկման է ներկայացվել «Առողջապահական, հոգաբարձության (խնամակալության), մանկական դաստիարակչական, էներգամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման, կապի եւ աշխատանքի այլ առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների աշխատանքի եւ հանգստի ռեժիմի առանձնահատկությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության համապատասխան որոշման մեջ փոփոխություն է լրացում կատարելու մասին նախագիծը: Փոփոխությունները միտված են ուսուցիչների բեռնվածության թեթեւացմանը, ինչպես նաեւ ֆինանսական վիճակի բարելավմանը: Ներկայում գործող իրավական ակտում բացակայում է հանրակրթական ուսումնական հաստատությունում դասավանդողների դրույքի վերաբերյալ կարգավորումը, եւ հանրակրթության պետական նոր չափորոշիչները մամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել նշված բացը կարգավորող դրույթ սահմանելու:

Հաշվի առնելով, որ տարրական դասարաններում, ուսումնական ծրագրերի շաբաթական ծանրաբեռնվածությամբ պայմանավորված, դասվարներն աշխատում են թերծանրաբեռնված եւ չեն կարողանում ապահովել մեկ դրույթ ծանրաբեռնվածություն («Ֆիզկուլտուրա», «Երաժշտություն», «Կերպարվեստ» առարկաները 1-4-րդ դասարաններում դասավանդում են համապատասխան որակավորում ունեցող մասնագետները), ուստի հանրակրթության պետական նոր չափորոշիչներում միավորային գնահատումը դասարաններում նախագծով մեկ դրույքը սահմանվում է 22 դասաժամ, որից դասավանդման համար՝ 18 սովորողի ձեւավորող գնահատման համար՝ 4 դասաժամ: Հարկ է նշել, որ տարրական դասարաններում միավորային գնահատումը փոխարինվում է ձեւավորող գնահատման մեխանիզմով, որը բավականին աշխատատար է եւ դասվարից զգալի ժամանակ է պահանջում: Այդ պատճառով էլ ներկայում գործող 22 դասավանդվող դասաժամից 4-ը հատկացվում է սովորողի ձեւավորող գնահատմանը: Պարտադիր կրթության երկրորդ եւ երրորդ աստիճաններում դասավանդման համար նախագծով սահմանվում է 20, սովորողի գնահատման համար՝ 2 դասաժամ:

Արտադպրոցական ուսհաստատություններում մանկավարժները կարող են դասավանդել շաբաթական 20 ժամ, որը, ըստ էության, համարժեք է 1 դրույքի: Համայնքային արտադպրոցական հաստատություններից ստացված առաջարկությունների, ինչպես նաեւ քննարկումների արդյունքում պարզ է դարձել, որ շաբաթական 20 դասաժամի սահմանումն առաջացրել է ֆինանսական հետեւանքներ, ինչպես նաեւ կարող է հանգեցնել գործող խմբակների փակման եւ դասավանդման թերծանրաբեռնվածության: Հետեւաբար, փոփոխությամբ առաջարկվում է աշխատանքային տեւողությունը անհատական եւ խմբային պարապմունքների համար սահմանել շաբաթական 24 դասաժամ: Այսպիսով փոփոխության արդյունքում համապատասխան կարգի գործարկմամբ արտադպրոցական ուսհաստատության մանկավարժական աշխատողների շաբաթական ծանրաբեռնվածությունը 1 դրույքի համար (անկախ կազմակերպարարական կարգավիճակից) կլինի միասնական եւ կունենա պետության կողմից կազմակերպական եւ ֆինանսական հստակ հիմքեր: Քաղաքացիները եւ շահառու խմբերը մինչեւ օգոստոսի 18-ը կարող են նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Ցածր առաջադիմություն ունեցող սովորողների ծրագրային բացը լրացվելու է երկարորյա պարապմունքների միջոցով

Հանրային քննարկման է ներկայացվել հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարորյա ուսուցման կազմակերպման կարգում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը: Փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2023-2024 ուստարվանից հանրապետության բոլոր դպրոցներում ներդրվելու է Հանրակրթության պետական չափորոշիչը, որի շրջանակում ցածր առաջադիմություն ունեցող սովորողները ծրագրային բացը լրացնելու են երկարորյա պարապմունքների միջոցով: Ներկայում գործող կարգում երկարորյա պարապմունքները խմբերը ստեղծվում են սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու, ինքնուրույն սովորելու կարողությունները եւ ստեղծագործական ունակությունները զարգացնելու նպատակով:

Գործող կարգով հաստատությունում երկարորյա խմբերի կազմակերպման հիմնական խնդիրներն են՝  
- տնային պայմաններում երեխայի կրթական աջակցության անհնարինությունը դեպքում՝ հաստատության մանկավարժական աշխատողների միջոցով եւ ուսումնանյութական բազայի հիման վրա այդ գործընթացների եւ դասապատրաստումների կազմակերպումը (այդ թվում՝ այլ դպրոցներ հաճախող սովորողների համար),  
- արտադասարանական աշխատանքներին սովորողների ակտիվ մասնակցության ապահովման միջոցով երեխայի ստեղծագործական ընդունակությունների զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծումը,  
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների, այդ թվում՝ ցածր առաջադիմությամբ, լրացուցիչ կրթական ծառայություններ մատուցումը:  
Հաշվի առնելով, որ չափորոշիչներում տրամաբանությանը համա-

պատասխան հանվել է բացասական գնահատականը, ինչպես նաեւ ցածր առաջադիմությունը չի կարող հիմք հանդիսանալ ուսումնառությունը կրկնելու համար, ուստի առաջարկվում է երկարորյա պարապմունքների միջոցով, ըստ անհրաժեշտության, լրացնել առարկայական ծրագրի բացը: Ըստ այդմ երկարորյա խմբերի կազմակերպման հիմնական խնդիրներից է դառնում նաեւ չափորոշիչը ներդրված դասարանների՝ ուսումնառության ցածր արդյունքներ ունեցող (այդ թվում՝ 200 ժամ բացակայությունների արդյունքում ծրագրային նյութը բաց թողնելու դեպքում) սովորողների համար ծրագրային նյութի յուրացման ապահովումը: Նախատեսվող փոփոխությամբ կահանվեն կրթական տարբեր աստիճաններում սովորողների երկարորյա խմբերում ընդգրկվածության, ինչպես նաեւ երկարորյա պարապմունքն ավարտելու դեպքերը:

Հեղինակ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# Հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2023-2024 ուսումնական տարվա 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ եւ 12-րդ դասարանների օրինակելի ուսումնական պլաններ

Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2023 թվականի հուլիսի 27-ի N 98-Ն հրամանի հավելված 1-ի

## 1. Հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ուսումնական պարապմունքները սկսելու, ավարտելու, ուսումնական պարապմունքների ընթացքում տրվող արձակուրդների ժամկետները

## 2. Հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների օրինակելի ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումներ

1. 2023-2024 ուսումնական տարվա ուսումնական պարապմունքները հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ Հաստատություն) 1-12-րդ դասարաններում սկսվում են 2023 թվականի սեպտեմբերի 1-ին, ավարտվում 2024 թվականի մայիսի 24-ին՝ 5-օրյա աշխատանքային շաբաթվա, մայիսի 25-ին 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ ապահովվելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ առաջին, 32՝ երկրորդ եւ 34՝ երրորդից տասներկուերորդ դասարանների համար:

տանքային օր առաջ գրավոր եղանակով համաձայնեցնում է նախարարության հետ:

4. Հաստատությունն անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային ամբարեմաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ եւ այլն) կարող է հանրակրթական հիմնական կրթական ծրագիրը իրականացնել հեռավար ձևով՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի՝ 2020 թվականի մայիսի 5-ի N 09-Ն հրամանի համաձայն:

5. Նախարարությունն անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային ամբարեմաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ եւ այլն) կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ կատարելով փոփոխություններ ուսումնական պարապմունքների եւ սովորողների համար սահմանված արձակուրդների ժամանակացույցներում: Սույն փոփոխությունները կարող է կատարել նաեւ Հաստատությունը՝ բաց թողնված ժամերը մինչեւ ուսումնական պարապմունքների ավարտը լրացնելու կամ ուսումնական պարապմունքները հեռավար եղանակով կազմակերպելու, ըստ Հաստատության ենթակայության, Լիազոր մարմնին 1-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնելու պայմանով:

6. Անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում Հաստատության դիմումի հիման վրա Լիազոր մարմինը (մարզպետը, Երեւանի քաղաքապետը) կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ այդ մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնելով նախարարությանը:

7. Նախարարության ենթակայության հաստատություններում արձակուրդների ժամկետների փոփոխությունները, ինչպես նաեւ Հաստատության կողմից լրացուցիչ արձակուրդի նախատեսումը կատարվում է Հաստատության նախաձեռնությամբ, Նախարարության համաձայնությամբ:

8. Ոչ պետական ուսումնական հաստատությունում արձակուրդների տեւողությունը է ժամկետները, ինչպես նաեւ դրանցում կատարվող փոփոխությունները սահմանում է հիմնադիրը՝ այդ մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնելով նախարարությանը:

9. Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ Հաստատություն) օրինակելի ուսումնական պլաններն (այսուհետ՝ Ուսումնական պլան) ունեն երկու՝ պետական, դպրոցական (մասնագիտացված դպրոցներում՝ մասնագիտական, հատուկ դպրոցներում՝ զարգացնող, հատուկ մանկավարժական) բաղադրիչ: Պետական եւ դպրոցական (մասնագիտացված դպրոցներում՝ մասնագիտական, հատուկ դպրոցներում՝ զարգացնող, հատուկ մանկավարժական) բաղադրիչները պարտադիր են: Հաստատությունը Ուսումնական պլանի հիման վրա դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ հաստատում է սովորող ուսումնական տարվա իր ուսումնական պլանը:

10. Մասնագիտացված դպրոցի Ուսումնական պլանը կազմվում է վերջինիս կողմից իրականացվող մասնագիտացված ծրագրերի (ռազմագիտության, սպորտի, արվեստների, արհեստների, գիտության որեւէ բնագավառի) հիման վրա:

11. Հաստատության Ուսումնական պլանը սահմանում է միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների եւ հանրակրթական պետական ծրագրի նորմատիվային ծավալը (սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը)՝ ըստ դասարանների:

12. Պետական բաղադրիչով սահմանված ժամաքանակում փոփոխություն կարող է կատարվել նախարարության համաձայնությամբ՝ ուսումնական տարվա սկզբից առնվազն 1 ամիս առաջ՝

1) արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողների ուսուցումն առավել բարենպաստ պայմաններում կազմակերպելու համար,

2) բազմաժամակազմ կամ թերբեռնված դասարանների առկայության դեպքում,

3) նախարարության՝ սովորող Հաստատության համար երաշխավորված այլընտրանքային ծրագրերով ու մեթոդներով ուսուցում իրականացնելու դեպքում:

13. Հաստատության 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարաններում ուսումնական գործընթացը կազմակերպվում է Հանրակրթության պետական չափորոշիչի (ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշում) եւ առարկայական նոր չափորոշիչների ու ծրագրերի պահանջների հիման վրա:

14. Հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթությունը կազմակերպվում է Հաստատության կողմից հաստատված ուսումնական պլանների հիման վրա՝ յուրաքանչյուր սովորողի համար, կազմելով անհատական ուսուցման պլան (ԱՌԴ):

15. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների (բացառությամբ ինտելեկտուալ (մտավոր) հետամնացություն ունեցող սովորողների), ինչպես նաեւ տնային եւ հիվանդանոցային պայմաններում երկարատեւ բուժվող սովորողների անհատական ուսուցումն իրականացվում է՝

1) «Տնային եւ հիվանդանոցային պայմաններում երկարատեւ բուժվող սովորողների անհատական ուսուցման ուսումնական պլան»-ով՝ համաձայն սույն Հավելվածի գլուխ 4-ի Աղյուսակ 6-ի:

2) Տնային եւ հիվանդանոցային պայմաններում երկարատեւ բուժվող ինտելեկտուալ (մտավոր) 2-րդ, 3-րդ եւ 4-րդ աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողների ուսուցումը իրականացվում է «Տնային եւ հիվանդանոցային պայմաններում երկարատեւ բուժվող 2-րդ, 3-րդ եւ 4-րդ աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցման ուսումնական պլան»-ով՝ համաձայն սույն Հավելվածի գլուխ 4-ի Աղյուսակ 16-ի:

16. Հաստատության ուսումնական պլանի պետական պարտադիր եւ դպրոցական բաղադրիչներն ուղղված են Հանրակրթության պետական չափորոշիչով, առարկայական չափորոշիչներով եւ ծրագրերով ամրագրված գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման եւ արժեքների ձեւավորմանը:

17. Հաստատությունում 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ դասարաններում եւ 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակում գործում է սովորողների միավորային գնահատման 10-միավորային սանդղակ:

18. 1-ին դասարանում սովորողներին ընթացիկ եւ ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում. ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով (ձեւավորող գնահատում): Տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի կրթական զարգացման բնութագիրը:

19. Գիտելիքների ստուգումների, հիմնական եւ միջնակարգ կրթության ավարտական եւ պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվող գնահատման այլ սանդղակները բերվում են գնահատման 10 կամ 20-միավորային գրանցման:

20. Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձեւավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների հիման վրա՝ տարեկան գնահատականները՝ բացառությամբ սույն Հավելվածի գլուխ 2-ի 18-րդ կետով նախատեսված դեպքի:









# Հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2023-2024 ուսումնական տարվա 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ եւ 12-րդ դասարանների օրինակելի ուսումնական պլաններ

**սկզբը` էջ 8**

37. Օտար լեզվի ընտրության կարգ.  
1) Հանրակրթական հիմնական պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների երկրորդ դասարանում դասավանդվում է մեկ օտար լեզու, իսկ 3-12-րդ դասարաններում` երկու օտար լեզու: Այդ օտար լեզուներն են անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ Նախարարության կողմից երաշխավորված ծրագիր ունեցող այլ լեզուներ:

2) Հաստատության ընտրությամբ երրորդ օտար լեզու կարելի է դասավանդել դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին` 5-9-րդ դասարաններում (շաբաթական 1,5 կամ 2 ժամ, 10-12 դասարաններում` 2 ժամ) Նախարարության կողմից հաստատված ծրագրերի, ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում:

3) Նախարարության կողմից` Հաստատության մանկավարժական խորհրդի եւ ըստ Հաստատության ենթակայության Լիազոր մարմնի առաջարկությունների հիման վրա, կարող է փոխարինվել Հաստատությունում դասավանդվող երկրորդ օտար լեզուն (անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն եւ այլն) այլ օտար լեզվով, ինչպես նաեւ որոշվել նոր հիմնադրված Հաստատությունում դասավանդվող երկրորդ օտար լեզուն:

38. Մասնագիտացված կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում դասարանները ձեւավորվում են Մասնագիտացված դպրոցի կանոնադրության համաձայն:

39. Տարրական դպրոցում «Ռուսաց լեզու» եւ «Օտար լեզու», միջին դպրոցում եւ ավագ դասարաններում «Հայոց լեզու», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» եւ «Ինֆորմատիկա» (6-րդ, 8-9-րդ եւ 10-12-րդ դասարաններ) առարկաների պարապմունքներին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե սովորողների թիվը 20 եւ ավելի է:

40. Դասարանը նույն կարգով կարելի է բաժանել երկու խմբի նաեւ Նախարարության երաշխավորված «Գրաբար» (8-րդ, 11-րդ դասարաններ) առարկայի պարապմունքների ժամանակ` դպրոցական բաղադրիչի ժամաքանակն այդ առարկային տրամադրելու դեպքում:

41. «Տեխնոլոգիա» առարկայի (5-6-րդ դասարաններ) պարապմունքներին դասարանը բաժանվում է երկու խմբի սովորողների ընտրությամբ` անկախ սովորողների թվից: Խմբերում ուսուցումը կազմակերպվում է Նախարարության կողմից հաստատված եւ յուրաքանչյուր խմբի համար Հաստատության կողմից ընտրված առարկայական ծրագրով:

42. Հաստատությունը իրավասու է վերաբաշխելու առարկայի ուսուցմանը Ուսումնական պլանով հատկացված ժամերը` պահպանելով տվյալ առարկայի տարեկան ընդհանուր ժամաքանակը:

43. Հաստատության 8-9-րդ եւ 10-11-րդ դասարաններում Նախարարության կողմից երաշխավորված ծրագրի եւ ուսումնական նյութերի հիման վրա դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ:

1) 8-9-րդ եւ 10-11-րդ դասարաններում «Առողջ ապրելակերպ» դասընթացին տրամադրված ժամաքանակը ձեւավորվում է «Ֆիզկուլտուրա» առարկայի տարեկան ժամաքանակից առանձնացված 14 դասաժամի հաշվին:

2) «Ֆիզկուլտուրա» առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերը ենթարկվում են թեմատիկ վերաբաշխման` պահպանելով տվյալ դասարանի համար Նախարարության հաստատած ծրագրային ամբողջ ծավալը:

3) «Առողջ ապրելակերպ» դասընթացը դասավանդվում է ուսումնական պարապմունքների ընթացքում:

4) «Առողջ ապրելակերպ» դասընթացի ընթացիկ գնահատում չի կատարվում:

5) Դասավանդումը դասընթացի գրանցումները կատարվում են առանձին էջում:

44. 6-րդ դասարանում «Կերպարվեստ» ուսումնական առարկան դասավանդվում է առաջին, իսկ «Երաժշտություն» առարկան երկրորդ կիսամյակում: 7-րդ դասարանում «Երաժշտություն» ուսումնական առարկան դասավանդվում է առաջին, իսկ «Կերպարվեստ» առարկան երկրորդ կիսամյակում: «Կերպարվեստ», «Երաժշտություն» եւ «Ֆիզկուլտուրա» առարկաների ժամերը կարող են դասացուցակում բաշխվել շաբաթվա նույն օրը այնպես, որ այդ առարկաների` ուսումնական պլանով սահմանված շաբաթական կամ ամսական ժամերը իրականացվեն այդ օրվա ընթացքում:

45. Հաստատությունների տարրական, միջին եւ ավագ դպրոցներում հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների համար «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցումը կարող է իրականացվել «Հանրակրթական դպրոցի հատուկ բժշկական խմբերի «Ֆիզկուլտուրա» առարկայի 1-12-րդ դասարանների ծրագրով», Հաստատության խմբակների համար նախատեսված ժամաքանակի շրջանակում կամ տվյալ դասարանի «Ֆիզկուլտուրա» առարկայի դասաժամերին անհատական ծրագրով:

46. Հաստատությունում հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների գնահատում «Ֆիզկուլտուրա» առարկայից չի կատարվում:

ները` ըստ բաղադրիչների եւ սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության մեկազգայն ծավալը` ըստ դասարանների:

48. Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող միջնակարգ դպրոցի 10-12-րդ դասարաններում, ֆինանսական միջոցների առկայության դեպքում, Հաստատությունը կարող է առաջնորդվել «Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող առանձին գործող ավագ դպրոցի օրինակելի ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումներին» 51-րդ կետի պահանջներով:

49. Ավագ դպրոցի 10-12-րդ դասարաններում երաշխավորվում են հոսքերի հետևյալ խմբերը`

1) հիմնական - հումանիտար, բնագիտամաթեմատիկական, արհեստագործական,

2) ընդհանուր:

50. Ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների ուսումնական պլանները, ըստ հոսքերի, տրված են.

1) ընդհանուր հոսքը` «Հաստատության ուսումնական պլան»-ում (համաձայն սույն Հավելվածի Գլուխ 4-ի Աղյուսակ 1-ի),

2) հումանիտար հոսքը` «Հանրակրթական ավագ դպրոցի հումանիտար հոսքի 10-12-րդ դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն սույն Հավելվածի Գլուխ 5-ի Աղյուսակ 17-ի),

3) բնագիտամաթեմատիկական հոսքը` «Հանրակրթական ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի 10-12-րդ դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն սույն Հավելվածի Գլուխ 5-ի Աղյուսակ 18-ի),

4) արհեստագործական հոսքը` «Հանրակրթական ավագ դպրոցի արհեստագործական հոսքի 10-12-րդ դասարանների ուսումնական պլան»-ում (համաձայն սույն Հավելվածի Գլուխ 5-ի Աղյուսակ 19-ի):

51. 10-12-րդ դասարաններում հոսքային ուսուցման առարկաների դասերին ֆինանսական միջոցների առկայության դեպքում դասարանի խտությունը կարող է սահմանվել 12-14 սովորող` ուրտրը կարգավորող սամիտարական եւ շինարարական նորմերի եւ կանոնների պահպանմամբ:

52. Ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների եւ միջնակարգ դպրոցի ավագ աստիճանի 10-12-րդ դասարանների ուսումնական պլանով միեւնույն դասարանի(ների) սովորողները ընդհանուր հանրակրթական բաղադրիչի շրջանակում Հիմնական ծրագրով ուսումնասիրվող երկրորդ օտար լեզվի (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն կամ որևէ այլ լեզու) դասաժամին խմբավորվում են ըստ իրենց կողմից հիմնական դպրոցում ուսումնասիրված օտար լեզվի` անկախ սովորողների թվից, բայց ոչ ավելի, քան երեք օտար լեզվի համար:

53. Օրինակելի ուսումնական պլանների կառուցվածքը.

1) 10-12-րդ դասարաններում հոսքային (խորացված) ուսուցման Ուսումնական պլանները կազմված են ընդհանուր հանրակրթական, հոսքային (արհեստագործական հոսքում` մասնագիտական) եւ դպրոցական բաղադրիչներից:

2) Ընդհանուր հանրակրթական բաղադրիչը ներառում է հանրակրթական ուսումնական առարկան(երը) եւ յուրաքանչ-

յուր առարկայի համար նախատեսված շաբաթական ժամաքանակները` ըստ դասարանների: Ընդհանուր հանրակրթական առարկաները պարտադիր են տվյալ հոսքի (ենթահոսքի) համար:

3) Հոսքային բաղադրիչով սահմանված ժամաքանակը տրամադրվում է խորացված ուսուցմամբ առարկաների դասավանդմանը, իսկ արհեստագործական հոսքում` մասնագիտական դասընթացներին: Հոսքային բաղադրիչում ընդգրկված առարկաները (դասընթացները) ուղղված են սովորողի հետագա մասնագիտական կրթության հիմքերի ստեղծմանը եւ հանրակրթությունից մասնագիտական կրթության անցմանը շարունակականության ապահովմանը, իսկ արհեստագործական հոսքի պարագայում` նախնական մասնագիտական կրթության որոշակի որակավորումների շրջանակում համապատասխան հմտությունների ձեռքբերմանը:

4) Նախարարությունը, հաշվի առնելով տվյալ Ավագ դպրոցի առանձնահատկությունները, խորացված ուսուցմամբ առարկաների ցանկում կատարում է փոփոխություններ` տվյալ հոսքի խորացված ուսուցման առարկաներին ավելացնելով նոր առարկաներ) Ավագ դպրոցի առաջարկության եւ հաստատված առարկայական ծրագրի(երի) առկայության դեպքում:

5) Ավագ դպրոցի 10-12-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչն ընդգրկում է ընդհանուր հանրակրթական եւ հոսքային ուսուցման առարկաները (արհեստագործական հոսքում` մասնագիտական), հոսքային ուսուցման բովանդակությունը լրացնող ընտրովի (լրացուցիչ) առարկաները, դասընթացները եւ դրանց ուսուցման համար ըստ դասարանների նախատեսված ժամաքանակները: Այս բաղադրիչը տնօրինում է դպրոցը` ղեկավարելով հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող առանձին գործող ավագ դպրոցի Օրինակելի ուսումնական պլաններով եւ Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկով:

6) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է սովորողների նախասիրություններին, ուսումնական հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով:

7) 10-12-րդ դասարաններում Ավագ դպրոցն ուսումնական պլանների հիման վրա ընդհանուր հանրակրթական, հոսքային եւ դպրոցական բաղադրիչների տնօրինմամբ մշակում է յուրաքանչյուր հոսքի` տվյալ ուստարվա ենթահոսքերի իր ուսումնական պլանները: Ենթահոսքերի ուսումնական պլանները կազմելիս դպրոցն ընդհանուր հանրակրթական եւ հոսքային բաղադրիչներով նախատեսված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը հատկացնում է դպրոցական բաղադրիչին:

8) Ընդհանուր հանրակրթական, հոսքային եւ դպրոցական բաղադրիչները ֆինանսավորվում են պետական բյուջեից:

9) 10-11-րդ դասարաններում եւ 12-րդ դասարանի առաջին կիսամյակում շաբաթական ուսումնական պարտադիր բեռնվածությունը բոլոր հոսքերում սահմանվում է 34 դասաժամ:

### 3. Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող առանձին գործող ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումներ

47. Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող առանձին գործող ավագ դպրոցի (այսուհետ` Ավագ դպրոց) 10-12-րդ դասարանների օրինակելի ուսումնական պլանները սահմանում են հոսքային ուսուցման

ծրագրեր իրականացնող Ավագ դպրոցի 10-12-րդ դասարաններում միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը` ըստ տարբերակված հոսքերի, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ժամաքանակ-

## Հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2023-2024 ուսումնական տարվա 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ եւ 12-րդ դասարանների օրինակելի ուսումնական պլաններ

սկիզբը՝ էջ 9

54. Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգը հոսքային ուսուցմամբ դասարաններում

1) Հաստատության 10-12-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչի ժամաքանակը տրամադրվում է Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկի, ինչպես նաեւ տվյալ հոսքային ուսուցմամբ դասարանի ընդհանուր հանրակրթական եւ հոսքային ուսուցման բաղադրիչների առարկաներին, դասընթացներին:

